



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ուսուցման արդյունավետ մեթոդների կիրառումը տարրական դասարաններում

ՀԵՂԻՆԱԿ Աշխեն Ասատրյան

ՄԱՐԶ Երևան

ԴՊՐՈՑ «Երևանի Մոնթեն Մելքոնյանի անվան համար 11 հիմնական դպրոց»

Բովանդակություն

Ներածություն	3
Գլուխ 1. Ինտերակտիվ ուսուցումը որպես արդյունավետ ուսուցման մեթոդ	4
1.1 Ինտերակտիվ ուսուցման կիրառության մեթոդները	7
1.2 Ինտերակտիվ ուսուցման մեթոդի կիրառման արդյունավետությունը կրտսեր դպրոցում	8
Գլուխ 2. ուսուցման մեթոդներ եվ հնարներ	10
2.1 Դասի սկզբում կիրառվող մեթոդներ	10
2.2 Նոր նյութի բացատրության ընթացքում կիրառվող մեթոդներ	12
2.3 Սովորածը պարզելու հնարներ	15
Գլուխ 3. Արդյունավետ ուսուցման յոթ մոտեցումներ	20
Եզրակացություն	22
Օգտագործված գրականության ցանկ	23

Ներածություն

Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը՝ որպես հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոցներ, ամրագրվել են դեռևս 1990-ականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան» (1989թ., ՄԱԿ) և «Կրթությունը բոլորի համար համաշխարհային հռչակագիրը» (2002թ., Գակար):

Կենսունակ և ուժեղ ժողովրդավարության հիմնական շարժիչ ուժը երկրում հանդիսանում է՝ ազատությամբ, արդարությամբ և համերաշխությամբ առաջնորդվող հասարակությունը: Իսկ ահա արժեքահեն և իրավագիտակից հասարակության ձևավորման հիմնասյուներից կարևորագույնը որակյալ կրթությունն է: Դասավանդման նորարարական, ազդեցիկ ռազմավարություններով զինված մանկավարժները կարող են ստեղծել միջավայր, որը խրախուսում է վերլուծական, քննադատական միտքը աշակերտների շրջանում և կարող են ազդել երեխաների ճանաչողական, սոցիալական և հուզական զարգացման վրա: Աշակերտների կարիքների բազմազանությունը պահանջում է, որ մանկավարժները հարմարեցնեն և նորարարեն իրենց մոտեցումները՝ նպատակ ունենալով խթանել նրանց հետաքրքրասիրությունը և ուսման հանդեպ սերը:

Հատկապես տարրական դասարաններում ուսուցման արդյունավետ մեթոդները վճռորոշ դեր ունեն սովորողների կրթական փորձառությունների և արդյունքների ձևավորման գործում:

Գլուխ 1. Ինտերակտիվ ուսուցումը որպես արդյունավետ ուսուցման մեթոդ

Ուսուցման մոդելներն ապահովում են կրթական պրոցեսի որակը: Դրանց շարքում առանձնացվում են երեք հիմնական մեթոդ՝

1. պասիվ (էքստրասակտիվ ռեժիմ),
2. ակտիվ (ինտրասակտիվ ռեժիմ),
3. ինտերակտիվ (ինտերակտիվ ռեժիմ):

Խոսելով ինտերակտիվ մոդելի մասին՝ նշում ենք, որ հասկացությունը ծագել է անգլերեն «interact», «inter-փոխադարձ», «act-գործել» բառերից: Ինտերակտիվ ուսուցումը ուղեկցվում է երկխոսությամբ, որի ընթացքում աշակերտները համագործակցում են ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ:

Ինտերակտիվ ուսուցման կազմակերպումը ենթադրում է կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի օգտագործում, հարցերի և խնդիրների ընդհանրացնող հետևություն, տեղեկատվական հոսքերի ներթափանցում գիտակցության մեջ, որը դրդում է ակտիվ գործունեության: Այդ իսկ պատճառով, դասի կառուցվածքի մեջ ներառվում են ուսուցման ինտերակտիվ մոդելի կոնկրետ ձևեր և մեթոդներ, որոնք թույլ են տալիս դարձնել դասն անսովոր և ավելի հազեցած ու հետաքրքիր:

Ըստ մասնագետների՝ ինտերակտիվ մոտեցումներն մոտիվացնում են աշակերտներին, ուսուցումը դարձնում հետաքրքիր, բովանդակային ու մասնակցային, ապահովում և նպաստում են նոր նյութի արագ յուրացմանը, դրա պահպանմանն ու հետագա կիրառմանը:

Հարկ է նշել նաև, որ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Դասավանդողի ֆունկցիաներն են՝

1. Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը: Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը:
2. Բաժանել սովորողներին խմբերի և տալ հանձնարարություններ:
3. Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:
4. Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքն արտահայտող սովորողը:
5. Օգնել աշակերտներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն պրակտիկ և ընդհանուր նշանակություն:

Հայտնի է, որ նոր բան սովորելիս մարդը թույլ է տալիս սխալներ: Ուսուցչի խնդիրը կայանում է նրանում, որ աշակերտի ուսումնական պրոցեսում կատարված սխալները ուսումնասիրի և վերլուծի:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ ինտերակտիվ ուսուցումն ուղեկցվում է այնպիսի սկզբունքներով, ինչպիսիք են՝

- փոխազդեցությունը,
- փոխուսուցումը,
- ակտիվությունը,
- համագործակցությունը,
- ինքնարտահայտման խրախուսումը,
- հետադարձ կապը:

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքից զատ, առանձնացնում ենք նաև ինտերակտիվ

դասի սկզբունքներ:

- Դասընթացի բոլոր մասնակիցները հավասար են:
- Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իր կարծիքը ներկայացնել ցանկացած հարցի վերաբերյալ: Աշխատանքի մեջ պետք է ներգրավված լինի:
- Ոչ մի սովորող չի քննադատվում:

- Պետք է հոգալ մասնակիցների հոգեբանական պատրաստվածության մասին. խոսքը գնում է նրա մասին, որ ոչ բոլոր մասնակիցներն են հոգեպես պատրաստ ներգրավվելու այս կամ այն աշխատանքի մեջ: Այս առումով օգտակար է գովքը՝ ակտիվ մասնակցության ինքնադրսևորման համար: Շատ կարևոր է նաև հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները:
- Քննարկման ընթացքում անկանխատեսելի դժվարությունների դեպքում ուսուցիչը միջամտում է:
- Ակտիվ օգտագործվում է տեխնիկական ուսուցման միջոցներ՝ սլայդներ, ֆիլմեր, մուլտֆիլմեր, տեսահոլովակներ:
- Ինտերակտիվ ուսուցման մեթոդները թույլ են տալիս ակտիվացնել գիտելիքների յուրացման գործընթացը և դրանց ստեղծագործական կիրառումը գործնական խնդիրների լուծման համար:
- Ձևավորում է ինքնուրույն տեղեկատվություն գտնելու, վերլուծելու կարողությունը:
- Չարգացնում է այլոց տեսակետը լսելու, համագործակցելու կարողությունը:

1.1 Ինտերակտիվ ուսուցման կիրառության մեթոդները

Ինտերակտիվ ուսուցման մեթոդներն են՝

1. աշակերտների թիմային առաջադիմություն,
2. խճանկար,
3. շրջագայություն պատկերասրահում,
4. երեք բանալի և մեկ կողպեք,
5. հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Ինտերակտիվ ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Հարկ է նշել, որ այստեղ էականը այն հանգամանքն է, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Հետևաբար այն հանդիսանում է լուրջ խթան ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու

բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Ըստ մասնագետների՝ մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

Խճանկար (Ջիգս, Jigsaw): Մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարի փուլերն են.

1. նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
2. աշխատանք փորձագիտական խմբում,
3. աշխատանք ուսումնական խմբում,
4. ավարտական աշխատանք,
5. ամփոփում:

Շրջագայություն պատկերասրահում: Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման 8 փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Ուսումնասիրությունները փաստում են, որ այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և

առաջարկում հինգ բույսի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք:¹

1.2 Ինտերակտիվ ուսուցման մեթոդի կիրառման արդյունավետությունը կրտսեր դպրոցում

Կրտսեր դպրոցական տարիքում անչափ կարևոր և առանձնահատուկ է նոր ուսումնական նյութի մատուցումը, քանզի երեխայի համար առաջատար գործունեության ձևը խաղն է, և երեխան խաղի մեթոդով ավելի հեշտ կարող է յուրացնել դասը, քան ուսուցչակետնտրոն դասավանդման մեթոդով: Այս տարիքային փուլի սովորողի համար արդիական ու կարևոր լինելով խաղը՝ այդուամենայնիվ նրա կյանք ներմուծված է նաև կրթական խնդիրը, որպես առաջատար գործունեության ձև:

Ե.Ա. Կարպենկոն և Օ.Ի. Ռայսն իրենց համահեղինակած «Ինտերակտիվ տեխնոլոգիան կրթության մեջ» գրքում նշում են. «Ելնելով անձնական մանկավարժական փորձից, մենք հավատում ենք, որ ինտերակտիվ ուսուցման մոդելը հաջողությամբ իրականացվում է խաղերի նախագծման, վերապատրաստման, կրթ սեղանների, փոքր խմբերի աշխատանքի (գույգերով կամ ռոտացիոն եռյակով), գործարար և դերային խաղերի մեջ: Պետք է նշել, որ յուրաքանչյուր պարապմունքի ժամանակ կոնկրետ հմտության մշակումը պետք է իրականացվի "մինչև արդյունքը": Արդյունքն ակնհայտ է, մենք հավատում ենք և վստահ ենք, որ այդպես հեշտ է յուրացվում նյութը»:

Դեռ 2016 - 2017 թվականների վերլուծականով պարզ է դառնում, որ դասի նպատակներով պայմանավորված՝ ուսուցիչների 57.7%-ը (2016թ.) և 63.2%-ն (2017թ.) օգտագործում են փոխներգործուն և համագործակցային ուսուցման մեթոդներ ու հնարներ՝ ավելի հաճախ՝ մտազրոհը, T-աձև աղյուսակը, մտքերի քարտեզագրումը, պրիզման և այլն: Երկու տարիներին վերապատրաստված ուսուցիչների մոտ համեմատաբար զգալի տարբերություն է նկատվում՝ կիրառված

¹ Ուսուցման արդյունավետ հնարներ/ Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020

մեթոդների հաջող գուգակցում (2016 թվականին վերապատրաստված ուսուցիչները 4.7%-ով գերազանցել են 2017 թվականին վերապատրաստվածներին), ուսումնական գործողությունների ընթացքը՝ առաջադրանքների, վարժությունների, հանձնարարությունների առկայություն, որոնք վերաբերում են գիտելիքներին, հմտություններին, արժեքային համակարգին՝ չափանիշների գծով (2016 թվականին վերապատրաստված ուսուցիչները 9.6%-ով գերազանցել են 2017 թվականին վերապատրաստվածներին), նպատակներ, որոնք ակնկալում են տեսանելի արդյունք՝ ոչ ծավալուն առաջադրանքների, վարժությունների, հանձնարարությունների միջոցով չափանիշի գծով (2016 թվականին վերապատրաստված ուսուցիչները 75.4%-ով գերազանցել են 2017 թվականին վերապատրաստվածներին):

Կրտսեր դպրոցական տարիքի սովորողի համար կարևոր է, որ ինքը մասնակից լինի ուսումնական պրոցեսին, ոչ թե պասիվ ունկնդրի: Ինտերակտիվ մեթոդը հնարավորություն է տալիս սովորել նոր նյութ, միաժամանակ մասնակցել այդ դասընթացին: Որքան ինտերակտիվ դասը տեխնիկական նորությամբ է հագեցած՝ տեսաֆիլմով, տեսասահիկով, այնքան ավելի հրապուրիչ ու տպավորիչ ներգործություն է ունենում սովորողի վրա՝ ապահովելով նյութի արագ յուրացում:

Կրտսեր դպրոցականների ուսուցման հաջողության գրավականը կայուն ուսումնական շարժառիթի առկայությունն է:

Գլուխ 2. Ուսուցման մեթոդներ եվ հնարներ

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Կարելի է դասապրոցեսը բաժանել 3 մասի և յուրաքանչյուրի համար առանձնացնել մեթոդներ և հնարներ

1. դասի սկիզբ,
2. նոր նյութի բացատրություն
3. սովորածը պարզելու հնարներ:

2.1 Դասի սկզբում կիրառվող մեթոդներ

Տարբեր աղբյուրներ փաստում են, որ հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին:

Առանձնացնենք դասը սկսելու մի քանի հնարներ:

Խորհրդավորություն: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է

երեխաներին: Երբեմն կարելի է դասը սկսել հետևյալ նախադասությամբ. <<Ես մտքիս մեջ բան եմ պահել: Այն վերաբերում է մեր ուսումնասիրած թեմաներից մեկին: Դուք պետք է ինձ հարցեր տաք: Ես հարցերին պատասխանելու եմ միայն <<այո>> կամ <<ոչ>> տարբերակով, այնպես, որ նրանք օգնեն ձեզ կռահել մտքումս պահած թեման:>>

Գուշակություն: Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով

կարելի է փորձել հետևյալ տարբերակը՝ ուսուցիչն առաջարկում է թղթի վրա գրել ամենասիրած հեքիաթի անունը և մտապահել: Այնուհետև ուսուցիչը թղթերը

հավաքում է և խառը բաժանում աշակերտներին: Աշակերտները փորձում են գուշակել, թե ով է գրածի հեղինակը:

Չարմանք, անսպասելիություն: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են երեխաների ուշադրությունը: Օրինակ՝ տարբերակ է աշակերտների կողմից ուրիշի դեր ստանձնելը՝ պատկերացնեն, թե Մեսրոպ Մաշտոցն են, ինչպե՞ս կվարվեին:

Մեջբերումներ: Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը. աֆորիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ տալով նախագիտելիք, ստեղծելով աշխատանքային տրամադրություն:

Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՄ): Դասասկզբում ուսուցիչը գծում է Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին, որպեսզի նրանք հերթով լրացնեն աղյուսակի սյունակները:


Մտագրոհ: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Վերջին տարիներին մասնագետների կողմից նկատվում է մտահոգություն մտագրոհի հետ կապված: Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտագրոհը: Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին: Պարզապես լրացնում է այն:

Համագործակցություն, հակամարտություն, համակեցություն: Ուսուցիչը դասարանից դուրս է ուղարկում երեք սովորողների, չասելով՝ ինչու: Դասարանին ներկայացնում է թեմայի հետ կապված որևէ պատկեր, ապա դրսի երեխաներից մեկը ներս է գալիս, նայում նկարը, իր տեսածը ներկայացնում է երկրորդին, վերջինս էլ՝ երրորդին, ով դասարանին պատմում է՝ ինչի մասին է խոսքը: Դասարանին երրորդ մասնակցի պատմածը էականորեն տարբերվում է նրանց տեսածից, որից հետո կազմակերպվում է քննարկում-վերլուծություն: Ճիշտ հաղորդակցությունը նպաստում է համագործակցությանը, ոչ ճիշտ հաղորդակցությունը կարող է հանգեցնել հակասությունների:

2.2 Նոր նյութի բացատրության ընթացքում կիրառվող մեթոդներ

Ըստ գիտական հետազոտությունների՝ երեխան մեկ դասի ընթացքում կարող է սովորել 4-7 բան: Հետևաբար՝ նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը: Այդ առումով նոր նյութ բացատրելիս շատ կարևոր է այն փոքր կտորներով բացատրելը: 5-7 բայե նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝ արդյո՞ք հասկանում են երեխաները նոր ներկայացված նյութը: Ապա ևս 5-7 բայե ծախսել նոր նյութի մատուցման վրա:

Շատ կարևոր է նախադասությունների չափը: Խորհուրդ է տրվում երկար նախադասությունից հետո օգտագործել կարճ նախադասություն: Հետո միջին չափի նախադասություն: Նոր նյութը բացատրելիս կարևոր է օգտագործել *գծապատկերներ*: Ուսուցչի խոսքը պետք է ուղեկցվի պատկերներով: Ապացուցված է, որ աշակերտներն ավելի լավ են սովորում, երբ խոսքն ու պատկերը զուգակցվում են: Ստորև ներկայացված են գծապատկերների մի քանի օրինակներ:



Նոր նյութի մատուցման փուլում շատ կարևոր է նաև արդեն իմացածի հետ *կապակցումը*: Մարդը սովորում է այն դեպքում, երբ կարողանում է նոր գիտելիքը

կապակցել արդեն իմացածի հետ: Նոր նյութը բացատրելիս կարևոր է «սատանայի վկա» հնարի հաճախակի կիրառումը: Այս դեպքում ուսուցիչը միտումնավոր սխալ միտք է ասում, որպեսզի ստուգի, թե որքան ուշադիր է դասարանն իրեն լսում: Իհարկե, սխալը պետք է լինի աշակերտների արդեն իմացած նյութի շրջանակում: Հաճախ ուսուցիչներին թվում է, թե այդ դեպքում աշակերտները կարող են մտածել, որ իրենց ուսուցիչը չի տիրապետում նյութին և սխալ բաներ է ասում: Բայց մի քանի անգամ կիրառելուց հետո աշակերտները կհասկանան, որ դա մանկավարժական հնար է: «Սատանայի վկա» հնարի կիրառումը աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու լավ մեթոդ է:

Կենտրոններով աշխատանք: Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին: Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն, որոշակի աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով:

Ուսուցիչը առանձնացնում է խմբեր ըստ հետևյալ կենտրոնների՝

- հետազոտողների կենտրոն
- ստեղծագործողների կենտրոն
- գրավոր աշխատանքի կենտրոն
- բացահայտողների կենտրոն


Ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ ավելացնել կամ պակասեցնել կենտրոնների թիվը՝ փոխելով կամ հարմարեցնելով անունները:

Բացահայտողների կենտրոն: Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը, կատարում նշումներ, վեր հանում վերջինիս հիմնական միտքը, ենթատեքստը և ներկայացնում ընկերներին:

Հետազոտողների կենտրոն: Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և օգտվելով այդ պահին ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից՝ փորձում են լրացուցիչ հետաքրքիր նյութեր հայթայթել տեքստի վերաբերյալ:

Ստեղծագործողների կենտրոն: Մասնակիցները, տեքստի առանձնահատկություններից ելնելով, փորձում են այն որևէ կերպ վերարտադրել և

ներկայացնել, օրինակ՝ բեմականացում, պաստառի պատրաստում, նկարագարդում, երգ, պար և այլն:



Գրավոր աշխատանքի կենտրոն: Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և իրականացնում լեզվական կամ բառային աշխատանք՝ պահանջին համապատասխան:

Ուսումնական նյութը մատչելի դարձնելուն շատ են օգնում *դիդակտիկ պարագաները և նյութերը*՝ այն ամենը, ինչը ակադեմիական կրթությունը մոտեցնում է կյանքին: Օրինակ՝ Հովհաննես Թումանյանի կյանքն անցնելիս աշակերտները դասաժամերի մի մասն անց են կացնում գրողի տուն-թանգարանում, իրենց հուզող հարցերի պատասխաններն ստանում են նեղ մասնագետներից, ովքեր ներկայացնում ու ցուցադրում են Թումանյանի աշխատասենյակը, տան պարագաները, խոսում նրա կյանքի, թողած մեծ ժառանգության մասին, այսպիսով նրանք թեման ընկալում են անհրաժեշտ չափով, իսկ մանրուքները մոռանալուց հետո ընկալածը դարձնում գիտելիք:

2.3 Սովորածը պարզելու հնարներ

1. *Ֆրայերի մոդելը*: Մա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրել օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:

2. *Գիտելիքի դոմին*: Սովորողները նստում են մեծ սեղանի շուրջ:

Քայլ 1 - Բոլոր սովորողները ստանում են առնվազն 1 քարտ՝ կախված թեման ամփոփող հարցերի քանակից և սովորողների թվից:

Քայլ 2 - Ուսուցչի հրահանգով սովորողներից մեկը իր մոտի քարտը, վրայի հարցը կարդալով, դնում է սեղանին:

Քայլ 3 - Հնչած հարցի պատասխանն ունեցող սովորողը ասում է պատասխանը և իր քարտը դնում սեղանին՝ նախորդ քարտի հարցի շարունակությամբ, ու կարդում իր քարտի հարցը:

Քայլ 4 - Հաջորդաբար շրջանաձև դրվում են բոլոր քարտերը:

Քայլ 5 - Ավարտին շրջվում են բոլոր քարտերը, և ճիշտ դասավորվածության պարագայում քարտերի դարձերեսին երևում է թեմայի կարևոր հասկացությունը կամ միտքը: Օրինակ՝ արդար աշխատանքն արժանի է արդար վարձատրության:

Քայլ 6 - 2-3 աշակերտ արտահայտում է վերջնական մտքի վերաբերյալ սեփական մոտեցումները:

3. *Մտքերի հոսք*: Նոր նյութը բացատրելուց հետո ուսուցիչը դադար է վերցնում և աշակերտներին առաջարկում գրել, թե ինչ հասկացան նոր նյութից: Այնուհետև ուսուցիչը կարող է շարունակել նյութը բացատրել կամ կարող է առաջարկել զույգերով աշխատել: Աշակերտները միմյանց հետ քննարկում են հետևյալ հարցերը՝

- Ի՞նչ ընդհանուր բաներ ենք գրել:
- Կա՞ մի կարևոր բան, որ մոռացել էինք գրել:
- Արդյո՞ք որևէ սխալ բան ենք արել:
- Ինչու՞ ենք հատկապես գրել այս բաները:

4. *Երկու բան*

Նշե՛լ երկու բան՝

- որ այսօր սովորեցիք
- որոնք վերաբերում են ձեր կյանքին և կապված են այսօրվա դասի թեմայի հետ
- որ սովորել եք անցած դասին կամ անցած շաբաթ
- որոնց մասին կուզեյիք իմանալ ավելին
- որ սովորեցիք այս թեմայից:

5. *Վարդ, փուշ, բողբոջ*

Վարդ- նշե՛ք մեկ բան, որ լավ հասկացաք:

Փուշ- նշե՛ք մեկ բան, որը սովորելիս դժվարության բախվեցիք:

Բողբոջ- նշե՛ք մեկ բան, որը սովորելուց հետո ձեր գլխում նոր միտք ծագեց:

6. *Տասը տարի անց*: Նշե՛ք մեկ բան, որը կուզենայիք հիշել այս թեմայից տասը տարի անց:

7. *Սկսել, դադարեցնել, պահել*

- Նշե՛ք մեկ բան, որը կուզենաք սկսել:
- Նշե՛ք մեկ բան, որը կուզենաք դադարեցնել:
- Նշե՛ք մեկ բան, որը կուզենաք շարունակել:

8. *Հարցեր*: Հարցեր, որոնք հնարավորություն են տալիս պարզել, թե ինչ չափով են աշակերտները յուրացրել թեման:

- Ինչո՞վ են X-ն ու Y-ը իրար նման:
- Ո՞րն է նյութի հիմնական գաղափարը:
- Որո՞նք են X-ի ուժեղ և թույլ կողմերը:
- Ինչպե՞ս է X-ը կապված Y-ի հետ:
- Համեմատե՛ք X-ն ու Y-ը՝ ըստ Z չափանիշի:
- Որո՞նք են խնդրի լուծման տարբերակները:
- Ի՞նչը չեք հասկացել:

9. *Մետափնացության թերթիկ*: Այս թերթիկը լրացնելիս կատարեք հետևյալ քայլերը՝

- Ընթերցե՛ք հարցերը: Դրե՛ք աստղանիշ բոլոր այն հարցերի դիմաց, որոնց պատասխանները գիտեք: Դրե՛ք «՛» նշանը բոլոր այն հարցերի վրա, որոնց պատասխանները չգիտեք:
- Գրե՛ք իմացած բոլոր հարցերի պատասխանները պատասխան սյունակում:

10. *Ինձնից առաջ հարցրու երեք հոգու*: Այս հնարի իմաստն այն է, որ աշակերտները սովորեն նաև միմյանցից: Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին հարցերով դիմել իրենց դասընկերներին և իրեն դիմել միայն այն բանից հետո, երբ երեք աշակերտների դիմելուց հետո չեն ստացել հարցի պատասխանը:

11. *Դասի գեկուցող*: Այս պարզագույն հնարը շատ կարևոր դեր կարող է ունենալ սովորողներին դասապրոցեսում ընդգրկելու գործում: Ուսուցիչն աշակերտներից մեկին նշանակում է դասի գեկուցող: Վերջինս դասի ավարտից 3-5 րոպե առաջ ամբողջ դասարանին ամփոփ ներկայացնում է, թե ինչի մասին էր դասը, ինչ արեցին, ինչ կարևոր բաներ սովորեցին:

12. *Ես-Դու-Մենք*: Խմբային աշխատանքը մեծ տարածում ունի ժամանակակից դպրոցներում: Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ առանձին աշակերտներ «թաքնվում են» խմբի հետևում: Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել «ես-դու-մենք» հնարը: Յուրաքանչյուր աշակերտի կարելի է առաջարկել խմբային աշխատանքի վերջում ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի աշխատանքի որակը:

14. *Լուսակիր:* Ժամանակի սղության պատճառով շատ հաճախ ուսուցիչները դասապրոցեսում իրենց տված հարցերին մեկ-երկու աշակերտից պատասխան ստանալուց հետո առաջ են անցնում: Այս մոտեցումն ուսուցչին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու, թե ինչ չափով են տվյալ թեման յուրացրել դասարանի բոլոր աշակերտները: Նման իրավիճակում օգտակար է լուսակիր հնարի կիրառումը: Թեման ավարտելուց հետո ուսուցիչը դասարանին հարցնում է թեմայի յուրացման մասին: Յուրաքանչյուր աշակերտ բարձրացնում է իր մոտ գտնվող կանաչ, դեղին, կարմիր թղթերից որևէ մեկը: Եթե աշակերտը բարձրացնում է կանաչ թերթիկը, նշանակում է ամբողջությամբ յուրացրել է տվյալ թեման: Եթե բարձրացնում է դեղին թերթիկը, նշանակում է մասնակի է յուրացրել թեման: Իսկ կարմիր թերթիկ բարձրացնում են այն աշակերտները, ովքեր չեն յուրացրել թեման: Եթե կարմիր և դեղին թերթիկներ բարձրացնող աշակերտների թիվը շատ մեծ է, ապա նախընտրելի է, որ ուսուցիչը նորից անդրադառնա թեմային: Իսկ եթե թիվը մեծ չէ, ապա կանաչ գույն բարձրացրած աշակերտներին կարելի է հանձնարարել աջակցել իրենց դասընկերներին:

15. *Կիսատ նախադասություն:*

- Ես այսօր սովորեցի դասը...
- Ինձ զարմացրեց...
- Այսօրվա դասի ամենաօգտակար բանը...
- Ինձ հետաքրքրեց...
- Այս դասի ժամանակ ինձ ամենաշատը դուր եկավ...
- Մի բան, որ չհասկացա...
- Այս դասից հետո ես զգում եմ...
- Այս դասից ավելին կսովորեի, եթե...

Բերված կիսատ նախադասությունների օրինակների լրացումն օգնում է աշակերտներին ամփոփել դասը: Իր ընտրությամբ, ուսուցիչը կարող է տալ այս նախադասություններից մի քանիսը կամ բոլորը՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով իրենց ցանկությամբ ընտրել այն կիսատ նախադասությունները, որոնք կուզենան ավարտել:

16. «Խաթարված հերթականություն»: Այս վարժությունը կնպաստի գիտելիքների և կարողությունների զարգացմանը. պետք է նախօրոք պատրաստել թղթեր, վրան գրել տեքստից ընտրված կարևոր անունները, փաստերը, իրադարձությունները: Դրանք խառը հերթականությամբ փակցնել գրատախտակին, հետո խնդրել, որ այն դասավորեն հերթականությամբ:

17. Միավորային գնահատման իրականացում Quizizz առցանց գործիքի միջոցով: Այս ծրագրի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների առցանց համաժամանակյա միավորային գնահատում: Գործիքն օգտագործելիս սովորողները պետք է իմանան համապատասխան հարցման մուտքի կոդը:

Սովորողները հարցադրումներին հետևում և պատասխանները նշում են տիրույթին միացված ցանկացած գործիքի (հեռախոս, համակարգիչ, պլանշետ) օգնությամբ: Հարցման ավարտին հնարավոր է MS Excel ֆորմատով ներբեռնել սովորողների միավորային գնահատականները:

Ըստ ուսումնասիրության՝ այս տիրույթում աշխատելիս գնահատվում սովորողների կատարած առաջադրանքների և՛ արագությունը, և՛ ճշտությունը:

Վարժություններ ստեղծելիս հնարավոր է բազմակի ընտրանք ձևաչափով հարցադրումներ կազմել: Հարցերի հաջորդականությունը խառնվում է համակարգի միջոցով:

Quizizz առցանց գործիքը հնարավորություն է տալիս իրականացնելու հետևյալ աշխատանքները.

- միաժամանակ ստեղծել տարբեր թեմաներով և տարբեր քանակի հարցերից կազմված վարժություններ,
- պատրաստի վարժությունները խմբագրել, պահպանել առցանց,
- առցանց հետևել սովորողների առաջադիմությանը,
- հղմամբ տարածել պատրաստի վարժությունները,
- յուրաքանչյուր հարցի համար սահմանել ժամանակ,
- հրապարակման համար ընտրել լեզուն և սահմանել հասանելիության աստիճանը:

Գլուխ 3. Արդյունավետ ուսուցման յոթ մոտեցումներ

1. Մտաբերում: Վերջին տարիներին բազմաթիվ մասնագետներ նշում են, որ մտաբերումը ուսուցման առավել արդյունավետ ձևերից է: Պարզվում է, որ սովորելու չափանիշը իմացածը դուրս բերելն է, որ հայերեն կարող ենք կոչել մտաբերում:

2. Նյութի ափռում ժամանակի մեջ: ԱՄՆ-ի Հարավային Դակոտայի համալսարանի պրոֆեսորներ Դուգ Ռոհերը և Քելլի Թայլորը գիտափորձ են անցկացրել: Ուսանողների մի խմբին տրվել է տասը բարդ խնդիր և առաջարկվել լուծել մեկ շաբաթում: Մյուս խմբին տրվել է խնդիրների նույն ցանկը և առաջարկվել լուծել երկու շաբաթվա ընթացքում: Երկու խմբերից մոտավորապես նույն ժամանակն է պահանջվել խնդիրը լուծելու համար: Պարզապես մի խումբը այդ ժամանակը ծախսել է մեկ շաբաթվա ընթացքում, մյուս խումբը՝ երկու շաբաթվա: Այնուհետև երկու խմբերը քննություն են հանձնել: Քննության արդյունքում առաջին խմբի ուսանողներն ավելի բարձր արդյունքներ են արձանագրել: Նրանք լուծել են խնդիրների 75%-ը, իսկ երկրորդ խմբի ուսանողները՝ 70%-ը: Չորս շաբաթ անց հետազոտողներն առաջարկել են նորից քննություն հանձնել: Առաջին խմբի ուսանողները լուծել են խնդիրների 32%-ը, իսկ երկրորդ խմբի ուսանողները՝ 64%-ը: Այսպիսով՝ մոռացության ցուցանիշը երկրորդ խմբի մոտ չափազանց ցածր է եղել: Այստեղից հետևություն՝ շատ ավելի արդյունավետ է քննություններին պատրաստվել ոչ թե վերջին մեկ-երկու օրվա ընթացքում, այլ ավելի տևական ժամանակում: Իսկ կարևոր թեմաները ոչ թե պետք է ուսուցանել մեկ դասի ընթացքում և առաջ անցնել, այլ պետք է դրանց անընդհատ անդրադառնալ:

3. Խառը ուսուցում: Սա հատկապես տեսանելի է մաթեմատիկայի դեպքում: Պատկերացնենք, օրինակ, խնդիրների հետևյալ երկու շարքերը. Առաջին դեպքում ուսուցիչը աշակերտներին առաջարկում է լուծել միայն A տեսակի խնդիրներ, հետո՝ միայն B, ապա՝ միայն C, իսկ դրանից հետո՝ միայն D: Երկրորդ դեպքում ուսուցիչն առաջարկում է լուծել մեկական A, B, C, D տեսակի խնդիրներ, հաջորդ դասին նորից յուրաքանչյուր տեսակից մեկական և այդպես մի քանի դաս: Դուգ Ռոհերը և Քելլի Թայլորը այս թեմայի հետ կապված ևս գիտափորձ են արել: Երբ աշակերտներն ամեն դասին լուծել են մի տեսակի խնդիրներ, դասի վերջում նրանք ցուցաբերել են 100% արդյունք: Խառը խնդիրներ լուծելու դեպքում աշակերտների արդյունքը եղել է 81%: Բայց ընդամենը մեկ օր հետո նույն առաջադրանքները տրվել են աշակերտներին,

100%-ից ցուցանիշն իջել է 38%, իսկ երկրորդ խմբի աշակերտների դեպքում 81%-ից իջել է մինչև 77%:

Այսինքն՝ ակնհայտ է, որ խառը ուսուցման դեպքում աշակերտների գիտելիքներն ավելի մնայուն են:

4. *Մանրամասնում:* Դասավանդողների մոտ սովորաբար առկա է մի երևույթ, որը կոչվում է «գիտելիքի անեծք»: Գիտելիքի անեծքը պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտելիք ունեցող ուսուցիչը սովորեցնում է դեռևս գիտելիք չունեցող աշակերտին, այլ կերպ ասած՝ ուսուցման գործընթացում առկա է որոշակի ասիմետրիա:

5. *Օրինակներով ուսուցում:* Ուսուցման գործընթացում ուսուցիչները հաճախ են օրինակներ օգտագործում, սակայն դրանց հետ կապված կարևոր է իմանալ երկու բան:

Առաջին՝ հաճախ ուսուցիչները բավարարվում են մեկ օրինակ բերելով: Մինչդեռ, եթե ուսուցիչը բերի երկու կամ երեք օրինակ բերի, ապա նյութը հասկացող աշակերտների թիվը կմեծանա:

Երկրորդ՝ շատ կարևոր է, որ աշակերտներին առաջադրանքներ տալիս տրվեն այնպիսի օրինակներ, որոնցում հարցի պատասխանի մի մասը կա կամ ներառված են խնդրի լուծման որոշ քայլեր: Սա աշակերտներին քայլ առ քայլ սովորելու հնարավորություն է տալիս:

6. *Պատկերի և տեքստի համադրում:* Մարդիկ ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչը ուղեկցվում է պատկերներով: Դրանք կարող են լինել նկարներ, լուսանկարներ, գծագրեր, գծապատկերներ, ինֆոգրաֆիկաներ:

7. *Մետախմբացություն:* Ուսուցման գործընթացում շատ մեծ դեր ունի այն հանգամանքը, թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից ու չիմացածից: Այս երևույթը կոչվում է մետախմբացություն: Այս դեպքում աշակերտը կարողանում է իրեն կողքից նայել և հասկանալ իր իմացածն ու չիմացածը: Ահա այն 3 հարցերը, որը պետք է տա յուրաքանչյուր սովորող:

1. *Որտե՞ղ եմ ես:*
2. *Որտե՞ղ պետք է լինեի:*
3. *Ինչպե՞ս հասնեմ այնտեղ, որտեղ պետք է լինեի:*

Եզրակացություն

Գալով եզրահանգման հարկ է նշել, որ համահունչ մնալով տարրական դասարանների աշակերտների զարգացող կարիքներին և կիրառելով արդյունավետ ուսուցման հնարներ՝ մանկավարժները կարող են ամուր հիմքեր դնել, որը պատրաստում է աշակերտներին առջևում սպասվող մարտահրավերներին և հնարավորություններին: Դրանով նրանք նպաստում են հետաքրքրասեր, ընդունակ և վստահ ժամանակակից աշխարհի բարդությունները նավարկելու իրենց կարողության վրա անհատների ձևավորմանը :

Եկանք այն եզրահանգմանը, որ կրտսեր դպրոցական տարիքում սովորողի առաջատար գործունեության ձևը ուսումն է, սակայն պակաս կարևոր չէ նաև խաղը:

Կրտսեր դպրոցականը նոր նյութը սիրով և արագ յուրացնում է, երբ այն մատուցվում է խաղարկային, հետաքրքիր մեթոդներով, բազում դիդակտիկ նյութերով, ինտերակտիվ մոտեցումներով, նորագույն տեխնոլոգիաների ինտեգրումով:

Պարզեցինք նաև, որ վերջին տարիներին մանկավարժներն առավել շատ են կիրառում ինտերակտիվ մեթոդը՝ հաշվի առնելով վերջինիս արդյունավետությունն ուսուցման ոլորտում:

Ինտերակտիվ մեթոդի շնորհիվ հնարավոր է դասարանի ամենապասիվ սովորողին անգամ ներգրավել քննարկումներին:

Արդյունավետ մեթոդների կիրառումը դասապրոցեսում զարգացնում է կրտսեր դպրոցականի իմացական գործընթացները, մասնավորապես՝ ուշադրությունը, հիշողությունը, խոսքը: Դասապրոցեսի ընթացքում անընդմեջ հնչում են նոր մտքեր, վերլուծություններ, նոր գիտելիք, կրկնվում ու քննարկվում են այնքան, մինչև սովորողները յուրացնում են:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գալիր մանկավարժական հոդվածների ժողովածու, համար-8 (72)
2. Ուսուցման արդյունավետ հնարներ/ Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էրերտ հիմնադրամ, Հայաստան 2020
3. Ս.Խաչատրյան, Կամուրջներ պատերի փոխարեն, Անտարես, Երևան, 2014.
4. Համեմատական վերլուծություն. 2017 թ./ Երևան
5. В. П. Беспалько, Педагогика и прогрессивные технологии обучения, М., 1995,
6. Ольга Райс, Елена Карпенко. «Интерактивные технологии в обучении». Педагогика нового времени ISBN 978-5-4474-9670-8
7. Taylor, K& Rohrer, D., “The Effects of Interleaved Practice”, Applied Cognitive Psychology 24: 837–848 (2010).
<http://uweb.cas.usf.edu/~drohrer/pdfs/Taylor&Rohrer2010ACP.pdf>
8. <https://www.unicef.org/armenia/en/stories/examining-international-best-practices-informed-decision-making-general-education>